



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

23 մարտի 2016թվականի թիվ 8-Ա

ՄԱՐԶՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԱՅԴ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-Ի ԹԻՎ 23-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի»> 72-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ.ապրիլի 10-ի թիվ 384-Ն որոշման 2-րդ կետով

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզային քաղաքացիական պաշտպանության ծառայություններ և նշանակել այդ ծառայությունների պետեր համաձայն հավելվածի:
2. Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների ղեկավարներին՝ իրենց հրամաններով և որոշումներով ստեղծել համայնքային և օբյեկտային քաղաքացիական պաշտպանության ծառայություններ՝ համաձայնեցնելով ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի մարզային փրկարարական վարչության հետ:
3. Տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին՝ ելնելով համայնքի առանձնահատկություններից, բացի վերոհիշյալ քաղաքացիական պաշտպանության ծառայություններից ստեղծել այլ ծառայություններ:
4. Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների նախապատրաստումն իրականացնել յուրաքանչյուր տարում անցկացվող քաղաքացիական պաշտպանության հրամանատարական-շտաբային և շտաբային ուսումնավարժություններում նրանց ներգրավմամբ:
5. Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետերի և անձնակազմերի ուսուցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:
6. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի մարզային փրկարարական վարչության պետի վրա:
7. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2003թ. հունիսի 5-ի թիվ 23-Ա կարգադրությունը:
8. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Հ. ԱՐՈՎՅԱՆ

ք. Իջևան  
23 մարտի 2016թ.

Հավելված

«Տավուշի մարզպետի 2016թվականի

23 Մայիսի -ի թիվ 8-Ա կարգադրության

Ց Ա Ն Կ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզային քաղաքացիական պաշտպանության  
ծառայությունների և այդ ծառայությունների պետերի

h/h	Ծառայության անվանումը	Ծառայության պետ
1	Կապի և ազդարարման	«Արմենտել» ՓԲԸ հյուսիսային տարածքային կենտրոնի Տավուշ ցանցերի շահագործման ուղղության ղեկավար
2	Ինժեներական	ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ
3	Բժշկական	ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
4	Տրանսպորտային	ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանշին բաժնի վարիչ
5	Առևտրի և սննդի	ՀՀ Տավուշի մարզպետարանի զարգացման ծրագրերի և վերլուծությունների բաժնի վարիչ
6	Էներգետիկայի և լուսաքողարկման	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Ադատն» մասնաձյուղի տնօրեն
7	Բույսերի և կենդանիների պաշտպանության	ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
8	Հասարակական կարգի պահպանման	ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային ոստիկանության վարչության պետ
9	Նյութատեխնիկական մատակարարման	ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
10	Կոմունալ –տեխնիկական	ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
11	Բնապահպանության	ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ <i>վարիչ</i>
12	Բնակչության հատուկ սպասարկումների	«Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն» հիմնարկի տնօրեն

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵՎԱԿԱՐ

Ս. ԴԱՎԹՅԱՆ

